ԺԱ. ՏԱՐԻ 3154 — 12 ՕԳՈՍՏՈՍ 1894 — 22 ՍԷՖԷՐ 1312 — ՈՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعليه ده غلطه ده آره وەلك غزته سى اداره سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

# ԱՐԵՒԵԼՔ
## ՕՐԱԳԻՐ
### Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| Կ. Պոլսոյ համար | Տարեկան | դահեկան արծաթ | 130 |
| » | » Վեցամսեայ | » | 75 |
| » | » Եռամսեայ | » | 40 |
| Օտար երկիրներէ | Տարեկան | Ֆրանք | 56 |
| » | » | | 28 |
| Ընծր քաղքի | | Տարեկան Օսմ. Ոսկի | 2 |
| Գաւառաց | | Ղրուշ | 60 |

Խմբագրութեան ... այլ գրութիւն

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

## ՊԱՂՏԱՍԱՐ-ՊԱՏՈՒԵԼԻ[*]

Պաղտասար-Պատուելին կրթութիւնը եւ ուսումը ազգին մէջ տարածելու համար ամեն ջանք ի գործ դրաւ, դասարան-սենեակ բանալով, նախնեաց գրքերը տպելով, դասագրքեր հրատարակելով, Ամիրաները եւ ծնողքները համոզելով։

Բարեյիշատակ Շնորհք Ամիրան ալ՝ Պաղտասար պատուելիին ժամանակակից Ամիրաներէն լինելով, յիշեալ Պատուելիին մշակած կրթական խնդրոյն պաշտպան հանդիսացաւ, եւ մեծ զարկ տուաւ, ազգին աղքատիկ տղայոցը համար ձրի դաստիարակութիւն ջամբելու համար՝ Կ. Պոլսոյ կեդրոնական թաղերէն Օրթա-Սօքաք ըսուած փողոցին մէջ Ս. Լուսաւորչեան Նախակրթական դպրոցն հաստատելով, որ մինչեւ ցարդ կը շարունակուէր, աւելի կատարելագործեալ վիճակի մէջ, բայց դժբաղդաբար վերջին գետնաշարժը զայն եւս փլատակաց շեղջակոյտ մը դարձուց։

Իրա՛ւ, Պաղտասար-Պատուելին այդ կրթական անդրանիկ յարկին սերմը ցանեց կանուխէն, բայց տարաբաղդա-

...

ցողները՝ մեծ զգուշութիւն կ՚ընէին խօսքերնուն բնաբան մը գտնելու համար. բայց Պաղտասար կռահելով՝ դարձեալ պաղպարեամբ եւ տեսակ մը ստոյկու-

[*] Շարունակութիւն երեկի թիւէն։

## ԹԷ ԻՆՉՈ՞Ւ
### ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄԵՌԱԾ ԵՆ ԾՆՈՂՔՍ

Ա.

Կեսուրս ութսունինց պառաւ մ՚է եւ չը գիտեմ ինչո՞ւ դեռ կը շարունակէ ապրիլ։ Եթէ հասարակ կիներէն ըլլար, բնաւ մտահոգութիւն չպիտի պատճառէր ինձ իր գոյութիւնը. բայց, Աստուա՛ծ իմ, առանձին արարած մ՚է կ՚ըլլա՛յ, եղեր աշխարհիս երեսը։ Աղջիկտեսի եկած օրը ի՛նչ փափուկ էր, այն ի՛նչ լեզու, ի՛նչ գոռով. ի՛նչ սէր. երբ նշանուեցայ, պարզապէս կը գուրգուրար վրաս եւ իր այցելութիւններուն ժամանակ, բնաւ չէր նե-

...

պատճառ գրողներուն, եւ աւելի թարմ մտքերու թողլով Պաղտասար Պատուելիի արդիւնաւէտ կենացը մանրապատում եւ ընդարձակագոյն ուսումնասիրութիւնը կատարելու հաճոյքը եւ փառքը։

Ս. Յ. ՍՕՖԱՉԵԱՆ

ՎԵՐՋ

...

—Հէլպէ՛թ, ճանըմ. հայրն զինչ գործէ, որդին նմին նման, կը տեսնա՞ս մարը, անո՞րն տղայ է քիւ

Եւ այսպէս ամէն կողմէ բարեբաղդ, անհամբեր կ՚սպասէինք Մեծ-Պահոց վերջանալուն եւ տաչի պակին բացուելուն։

ՔԱՍԻՄ

## ՈՒՂԵՒՈՐԱԿԱՆ
### ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
#### ԲԻԷՌ ԼՈԴԻԻ

Հին կանանչ ծառեր ծռմռկած, հին չեղ կիսափուլ տանիքներ, խոտորնահայեաց չինացիներու դէմքեր. այս ամենուն մէջ կապակցութիւն կայ։ Անցեալի այս Թագաւորները, բոլոր այս հետքերը, Զոր-

...

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔ»Ի (73)

## ԺԻՒԼ ՄԱՌԻ

# ՏԺԳՈՅՆ ԱՂՋԻԿԸ

### ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ
#### ԷԼԻԶԵԷԹԻ ՀՕՐԸ

Եւ առաջքն առնելու համար այն յայտնութիւններուն որոնք Մանոի մէջ կրնային ըլլալ Ժօռժ տ՚Էռիպօի զաւկին, Պարթոլ գրած էր Պ. տը Մոնթէկլոնի.

«Պարոն, եթէ կը յիշէք Պեռնարը, իր

...

լար եւ Ժաքթէնի։

Պ. Միշիլիէ հինգ տարիէ ի վեր Ալճերի կը բնակէր՝ առողջութեան պատճառաւ։

Բերսիլարն ու Ժաքթէնը գտնել՝ անկարելի էր գէթ առ այժմ։

...

